# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

## «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/12» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մանուչարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. ՈՒմրոյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

### 1. Հայտերի գնահատման մասին

(Ս. Մանուչարյան)

1.1. Հայտերի բացման.
- վայրը՝ Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 321 սենյակ
-օրը՝ 22.05.2020թ.
-ժամը՝ 12:00

Գնահատող հանձնաժողովը գնահատելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, արձանագրեց հետևյալը.

1.2 Հրավերի I-մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ի և «ԻՆՇՈՒՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից՝ հրավերով սահմանված ժամկետում, ուղեկցող գրություններով տրամադրված հայտերի ապահովման՝ բանկային երաշխիքների բնօրինակները, համապատասխանում են հրավերի պայմաններին:
«Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված՝ կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է հրավերի պահանջներին:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.3. Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.

1. Գավառտրանս» ՍՊԸ-ի, «ԻՆՇՈՒՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի և Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են պատվիրատուի կողմից սահմանված հետևյալ՝ ստորև ներկայացված պահանջները.

- **Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:**

**Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:**

- **Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին,**
- **պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:**
- **Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:**
- **Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.4 «ԻՆՇՈՒՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հավելված 1.1՝ ապրանքի ամբողջական նկարագրում, նշված չի ապրանքային նշանը և մակնիշը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում սահմանված ապրանքի երկարությունը, խորությունը և բարձությունը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով նախատեսված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.5 Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հավելված 1.1-ում՝ տեխնիկական բնութագրում սահմանված ապրանքի բեռնատարողությունը, ներկայացված է առավելագույնը 510 կգ., չնշելով պատվիրատուի կողմից սահմանված ապրանքի քաշի նվազագույն ելակետային ցուցանիշը:

Տեխնիկական բնութագրի՝ «Աղբարկղը պետք է լինի» եզրույթով սամված պահանջներում բացակայում է «Հրդեհակայուն /չբոցավառվող/» պատվիրատուի կողմից սահմանված պահանջը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

1.6 Գնահատող հանձնաժովը հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 41 կետով, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Գավառտրանս» ՍՊԸ-ին, «ԻՆՇՈՒՐԱՆՍ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 23.05.2020թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակիցների հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.7 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի մայիսի 25-ին ժամը 12:00-ին:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | | Ս. Մանուչարյան |
| Անդամներ՝ | | Գ. Մեհրաբյան |
| | | Հ. Ռամազյան |
| | | Ա. Խաչատրյան |
| | | Ռ. ՈՒմրոյան |
| Քարտուղար՝ | | Գ. Մուրադյան |